ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ 21ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
K86Mkrtchyan@gmail.com

1990ականներու սկիզբին, Իրանի իսլամական պետութեան կողմէ հրապարակուած պաշտօնական դրոշմաթուղթ, ուր կը վկայաբերուի Քուրանէն համար մը Յիսուսի մասին

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աշխարհի բազմաթիւ ժողովուրդների պատմութեան անբաժան մաս են կազմում տարբեր չափերի եւ բնոյթի տեղաշարժերը: Դրանք ուղեկցուել են տարբեր պատմափուլերում՝ համապատասխանաբար հասարակական-քաղաքական եւ տնտեսական կերպափոխումներով: Հայ ժողովրդի պատմութեան դէպքում տեղաշարժերն ունեցել են պարբերական բնոյթ, իսկ որոշ դարաշրջաններում էլ դրանով է պայմանաւորուած եղել հայութեան այս կամ այն հատուածի ապրելակերպն ու գոյութիւնը իր հայրենի սահմաններից դուրս:

Ըստ էութեան հայոց պետականութեան բացակայութեան պայմաններում տեղաշարժերը հնարաւորինս որոշ դէպքերում լուծել են գոյութենական խնդիրներ, իսկ հեռանկարում նպաստել հայ գաղթաշխարհի ձեւա-

ւորմանը: Աւելին, յայտնի է, որ տեղաշարժերի հետեւանքով ձեւաւորուած մշակութային եւ կրթական կենտրոնները նպաստեցին մասնաւորապէս հայ գրատպութեան[1], ինչպէս նաեւ յետագայում հրապարակախօսութեան եւ առհասարակ հայագիտութեան նորովի ու հիմնարար զարգացմանը: Այդ գործին իր անմնացորդ ներդրումն ունեցաւ հայութեան այն ստուար զանգուածը, որը 1604ին Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով ձեւաւորուեց հայկական համայնքներ Իրանում:

Յայտնի է նաեւ այն փաստը, որ յետագայ դարերում իրանահայութեան թիւը զգալիօրէն նուազել է, այլ կերպ ասած՝ տեղի են ունեցել նոր ու միքանի տեղաշարժեր արդէն դէպի Հնդկաստան եւ հարաւարեւելեան Ասիայի երկրներ: Սակայն միշտ էլ, ինչպէս կ'անդրադառնանք ստորեւ, այդ երկրում հայութիւնն իրեն բնորոշ տեղն ու դերն է զբաղեցրել իրանական հասարակական կեանքում: Յիրաւի, նրա այդ դերակատարումը կամ կարգավիճակը եւս ենթարկուել է որոշակի ընկերա-իրաւական փոխակերպումների, այսինքն՝ քարացած վիճակում չի եղել: 19րդ դարավերջին եւ 20րդ դարասկզբներին նրան ուղեկցել են կամ ինքն է յաճախ դարձել հասարակական վայրիվերումների անմիջական մասնակիցն ու նոյնիսկ գլխաւոր դերակատարը, ինչպէս, օրինակ՝ 1905-11ի սահմանադրական յեղափոխութիւնն Իրանում եւ հայ քաղաքական Հնչակեան եւ Դաշնակցութիւն կուսակցութիւնների, Գրիգոր Եղիկեանի, Եփրէմ Խանի եւ այլ անուանի հայ գործիչների մասնակցութիւնը[2]:

1979ին իսլամական յեղափոխութիւնը, այնուհետեւ Իրան-Իրաք ութամեայ պատերազմը խթանեցին նոր տեղաշարժերի առաջացմանը իրանահայութեան կեանքում: Ըստ այդմ սոյն յօդուածի նպատակն է քննարկել այն խնդիրները, որոնք առկայ են այսօր Իրանի հայօճախում: Դրանք

---

[1] Յայտնի է, որ տպագրութեան գիւտը տեղի է ունեցել գերմանացի Եոհան Գիւտենբերգի ձեռքով 1445ին: Այս գիւտից հազիւ 70 տարի անց Վենետիկում Յակոբ Մեղապարտը տպագրում է հայերէն առաջին գիրքը՝ *Պարզապումարը* (1512): Առաջին տպագրիչ Յակոբից յետոյ, Աբգար դպիր Թոխատեցին կամ Եւդոկիացին նոյնպէս Վենետիկում 1565ին տպագրում է հայերէն առաջին օրացոյցը: Վենետիկից յետոյ երկրորդ վայրը, ուր հայերէն տպարան է աշխատել, եղել է Կոստանդնապոլիսը, որտեղ իր տպարանը տեղափոխել ու գրքերի հրատարակութիւնը շարունակել է Աբգար Դպիրը 1567ին: Յետագայում, յաջորդաբար, հայկական տպարաններ են հիմնուել Հռոմում՝ 1594ին, Լվովում՝ 1616ին, Միլանում՝ 1621ին, Փարիզում եւ այլ վայրերում: 7րդ տեղը պատկանում է Նոր Ջուղային, ուր տպարան է հիմնուել առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացու ջանքերով 1636-37ին, իսկ առաջին գիրքը տպագրուել է 1638ին:

[2] Կ. Մկրտչեան, «Հնչակեան կուսակցութեան մասնակցութիւնը 1905-1911 թթ. սահմանադրական յեղափոխութեանը իրանահայ գաղթօջախում», *Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան ստեղծման 125 եւ Արփիար Արփիարեանի ծննդեան 170 ամեակներին նուիրուած միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երեւան, 2022, էջ 140-47:

սերտօրէն կապուած են կրթական, մշակութային եւ հասարակական կեանքի այլ ոլորտների հետ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայ-իրանական յարաբերութիւններն ունեն միքանի հազարամեակի պատմութիւն: Լինելով տարածաշրջանի բնիկ ժողովուրդներ՝ հայերն ու իրանցիները պատմութեան քառուղիներում գրանցել են բազմաթիւ առնչութիւններ հասարակական կեանքի ամենատարբեր բնագաւառներում: Ակնյայտ է, որ այդ պատմամշակութային միջավայրում տեղի են ունեցել նաեւ տեղաշարժեր նրանց միջեւ: Առեւտրական սերտ կապերը եւ այդ գործում հայերի ունեցած փորձն ու հմտութիւնները միշտ էլ գնահատուել են իրանական պետութեան եւ նրա միապետերի կողմից, իսկ 19րդ դարում էլ որոշ հայեր դիւանագիտական ու զինուորական բարձր պաշտօններ են զբաղեցրել իրանական արքունիքում:

Իրանում հայ բնակչութիւն եղել է դեռեւս Ք.ա. 6րդ դարում: Դրանք հիմնականում հայկական զօրամասեր էին, որոնք վասալական պարտաւորութիւն էին կատարում՝ ծառայելով Աքեմենեան պետութեանը: Զգալի թիւ էին կազմում նաեւ առեւտրականներն ու արհեստաւորները: Իսկ որպէս բնիկներ՝ հայերը դեռեւս հնագոյն ժամանակներից ապրել են Ատրպատականում կամ պատմական Պարսկահայքում, որը հայկական պետականութեան անկումից յետոյ, 428ին մտաւ պարսից պետութեան կազմի մէջ[3]: Այսօր, Իրանի հայօճախն ունի աւելի քան 400 տարուայ պատմութիւն:

Ժամանակակից պարսիկ պատմաբան Խոսրով Զաքերին շեշտում է այն իրողութիւնը, որ հայերն Իրանում թէեւ մահմեդական բնակչութեան ծովում կազմում էին չնչին փոքրամասնութիւն, սակայն չնայած դրան, անչափ մեծ աւանդ, դերակատարութիւն ու ներդրում են ունեցել Իրանի հասարակական զարգացման, մշակութային առաջընթացի եւ առհասարակ մտաւորական ու քաղաքական կեանքի բնագաւառում[4]: Այսպիսով, հայօճախը ունեցել է զգալի դերակատարութիւն տարբեր ժամանակաշրջաններում Իրանի պատմութեան մէջ: Աւելին՝ մասնակցել է այդ պատմութեան կերտման գործին եւ փաստօրէն սովորական դիտորդի կամ սպառողի դերում հանդէս չի եկել:

Հայ գաղթօջախների պատմութեան մէջ իր ունեցած տեղաշարժերով առանձնանում է Իրանի հայօճախը, որը տարբեր պատմափուլերում ունեցել է ե՛ւ աճող, ե՛ւ նուազող ժողովրդագրական տուեալներ:

---

[3] Գառնիկ Բաղալեան, «Իրանահայ համայնք», «Իրան». *հանրագիտարան*, հեղինակային հրատ., Երեւան, 2011, էջ 396-99:

[4] Վ. Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ*, «Լուսակն», Երեւան, 2013, էջ 9:

1980ականների իրան-իրաքեան պատերազմը, ապա դրան յաջորդած տասնամեակներին եւ ընդհուպ մինչեւ մեր օրերը Արեւմուտքի կողմից սահմանած եւ պարբերաբար խստացուող պատժամիջոցները ընկերա-տնտեսական մեծ վնաս են պատճառել Իրանի բնակչութեանն առհասարակ, ինչպէս նաեւ նրա մի մասը կազմող հայօճախին: Այդ պայմաններում սկիզբ առաւ առ այսօր շարունակուող արտագաղթը, որը տեղաշարժերի ներկայ գործընթացներում վճռորոշ նշանակութիւն կ'ունենայ հայօճախի կեանքում:

Վերոնշեալ փաստով պայմանաւորուած՝ արտագաղթի խնդիրն իրենց գործունէութեան օրակարգում են պահում Թեհրանի, Սպահանի եւ Ատրպատականի հայոց թեմերը, համայնքային կառոյցները, ինչպէս նաեւ ազգային գործիչները: Ժողովրդագրական ճգնաժամի հետեւանքով փակւում են մանկապարտէզներ, դպրոցներ, նուազում է յատկապէս երիտասարդութեան թիւը: Այս առումով, յատկանշական է արեւելագէտ, պրոֆեսոր Վահան Բայբուրդեանի այն դիտարկումը, թէ Իրանի հայօճախի անցեալի պատմութիւնը բաւականաչափ ուսումնասիրուած է. մի բան, որ չի կարելի ասել հայօճախի ներկայ վիճակի ու զարգացումների մասին[5]: Յիրաւի, ելակէտ ունենալով նաեւ այս նկատառումը՝ փորձենք յօդուածի շրջանակներում անդրադառնալ հայօճախի որոշ խնդիրների:

1980ականներին, Իրանը լարել էր իր ուժերը շարունակելու համար Իրաքի դէմ ծանր ու հիւծիչ պատերազմը, որը խլում էր հարիւր հազարաւոր մարդկային կեանքեր եւ պատճառում վիթխարի նիւթական վնասներ երկրին[6]: Ակնյայտ է, որ այդ ռազմաքաղաքական իրողութիւններով պայմանաւորուած Իրանի հայօճախը բախուելու էր ընկերա-տնտեսական բարդ խնդիրների, որոնք տարածուելու էին նրա գործունէութեան բոլոր բնագաւառները: Եւ որպէս այդ ամէնի ցայտուն դրսեւորում կարեւորում ենք ժողովրդագրական տուեալները, որոնք հնարաւորութիւն են տալիս պատկերացում կազմել հայօճախի մասին թուերով:

Նախ հարկ է նկատի ունենալ, որ ներկայումս ըստ ՄԱԿի տուեալների՝ Իրանի բնակչութիւնը կազմում է աւելի քան 86 մլն, որը աշխարհի բնակչութեան 1,08%ն է[7]: Բնակչութեան թուով երկիրը զբաղեցնում է 18րդ տեղը: Յատկանշական է, որ բնակչութեան 75,5%ը կամ շուրջ 63 մլն մարդ քաղաքաբնակ է եւ միջին տարիքը կազմում է 32, մինչդեռ հայօճախի տարիքային շեմը տարէցտարի բարձրանում է եւ գերակշռում են տարէցները: Այլ կերպ ասած՝ երիտասարդ բնակչութեամբ յայտնի Իրանում հայերը ծերացող կամ աւագ տարիքի մարդկանց թուով գերակշռող հայօճախ են:

---

[5] Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 11:

[6] Վ. Բայբուրդեան, *Իրանի պատմութիւն*, «Զանգակ-97», Երեւան, 2005, էջ 730:

[7] https://www.worldometers.info/world-population/iran-population/#:~:text=The%20current%20population%20of%20the,year%20according%20to%20UN%20data. մատչում՝ 28 Օգոստոս 2022:

Իրանահայութեան թիւը տարբեր ժամանակաշրջաններում					
Տարի	1851	1890	1979	2003	2020
Քանակ	Շուրջ 20,000	80,000	200,000	80,000	Շ. 50,000

Իրանում հայութեան թուաքանակի վերաբերեալ կարեւոր է հաշուի առնել վիճակագրական հետեւեալ տուեալները: Այսպէս՝ 1851ին իրանահայերի թիւը մօտ 20 հազար էր, 1890ին՝ 80 հազար[8], 1979ին՝ 200 հազար[9], 2003ին՝ 80 հազար[10], ներկայում՝ շուրջ 50 հազար[11]: Յատկանշական է, որ մինչեւ Հայոց Ցեղասպանութիւնը հայրենիքից դուրս ապրող հայութեան թիւը (չհաշուած Ցարական եւ Օսմանեան կայսրութիւնների հայութիւնը) հասնում էր մօտ 200 հազարի, որից 100 հազարը բնակւում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում[12]: Փաստօրէն, եթէ պայմանական դիտարկենք նախաեղեռնեան ժամանակաշրջանի հայ գաղթավայրերը, ապա իրանահայ գաղթօջախը զբաղեցրել է առաջին տեղը:

Ըստ իրանահայ պատմաբան Էդիկ Բաղդասարեանի (Գերմանիկ) տուեալների՝ 1999ի դրութեամբ Իրանում բնակուել է շուրջ 80 հազար հայ: Հայօճախը խիստ շերտաւորուած է: Կան մեծ թուով արհեստաւորներ, արդիւնաբերութեան տարբեր ճիւղերում աշխատող բանուորներ, զգալի թուով մտաւորականներ, բժիշկներ, ճարտարապետներ, ուսուցիչներ, պետական հիմնարկների ծառայողներ եւն.[13]: 1999ի դրութեամբ հայերի թիւը Թաւրիզում եղել է գրեթէ 2000[14], իսկ Նոր Ջուղայում՝ շուրջ 8000[15]:

Իրանահայերի թիւը Իրանում, 1999ին, ըստ Էդիկ Բաղդասարեանի (Գերմանիկի)			
Թաւրիզ	Նոր Ջուղայ	Թեհրան	Ընդհանուր
2000	8000	70000	80000

Ինչ վերաբերում է Իրանի հայօճախի վերջին 20 տարուայ ժողովրդագրական իրավիճակին, ապա այն անհանգստացնող է, քանի որ մեծացել է

---

[8] Բաղալեան, էջ 397:

[9] Կ. Դալլաքեան, *Հայ Սփիւռքի պատմութիւն (համառօտ ակնարկ)*, «Զանգակ-97», Երեւան, 2004, էջ 194:

[10] Հ. Փահլեւանեան, «Իրան», *Հայ Սփիւռք հանրագիտարան*, խմբ.՝ Յովհ. Այվազեան, Ա. Սարգսեան եւ ուրիշ., «Հայկական հանրագիտարան», Երեւան, 2003, էջ 240:

[11] https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-irkniqn-uni-irani.html , մատչում՝ 29.09.2023:

[12] Ա. Եղիազարեան, *Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները 1918 թուականից մինչեւ մեր օրերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017, էջ 121:

[13] Էդ. Բաղդասարեան (Գերմանիկ), «Համառօտ ակնարկ իրանահայ գաղթօջախի պատմութեան», *Լոյս*, Դեկտեմբեր, 65-66:2002, էջ 18:

[14] Էդ. Բաղդասարեան (Գերմանիկ), «Համառօտ ակնարկ իրանահայ գաղթօջախի պատմութեան», *Լոյս*, Յունուար-Փետրուար, 67-70:2003, էջ 14:

[15] Բաղդասարեան, «Համառօտ ակնարկ», 67-70:2003, էջ 15:

արտագաղթողների թիւը, գրանցուել է ծնելիութեան փոքր թիւ, փակուել են որոշ դպրոցներ:

Իրանի հայօճախի ընթացիկ տեղաշարժերի պատճառ դարձած արդի խնդիրները առնչւում են տարածաշրջանի ընկերա-տնտեսական եւ քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ[16]: Դեռեւս 2001 Սեպտեմբերի 11ի Նիւ Եորքի ահաբեկչութեան հետեւանքով տարածաշրջանում մեծացաւ լարուածութիւնը[17], որի հետեւանքով սկսուեց արտագաղթի նոր ալիք: Այն, ինչ որ կերպ դադար առաւ այն ժամանակ, երբ 2018 Նոյեմբերի 3ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը վերականգնեց Իրանի դէմ պատժամիջոցները[18]:

Այսպիսով, կարելի է ասել, որ հայութիւնն Իրանում ապրում է արտակարգ իրավիճակներով պայմանաւորուած գործընթացների ազդեցութեան ներքոյ: 2013 Յուլիսի 3ին ԻԻՀ խորհրդարանի Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան հայազգի պատգամաւոր Կարէն Խանլարեանը նշել է, որ հայօճախից որոշակի արտագաղթ է նկատւում՝ դէպի ԱՄՆ ու Կանադա: Ըստ նրա՝ Իրանում ապրում է մօտ 60-70 հազար հայ, որոնց մեծ մասը զբաղւում է արհեստով ու առեւտրով[19]:

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի տուեալներով Իրանում ապրում է մօտ 70.000-80.000 հայ, որից Թեհրանում՝ գրեթէ 60.000, Սպահանում՝ մօտ 5000, Թաւրիզում՝ աւելի քիչ, իսկ Ուրմիայում՝ մօտ 1200: Թեհրանի հայոց թեմի միւս քաղաքներում ապրում են 15-20ական հայ ընտանիք[20]: Հարկ է նշել, որ 2005ին, Ատրպատականի հայ համայնքում (ներառեալ Թաւրիզը) հաշւում էր մօտ 2000 հայ[21]: Թուային տուեալների տարբերությունը կարելի է բացատրել այն իրողութեամբ, որ Ազգային առաջնորդարանի տուեալները հիմնուած են պաշտօնական տեղեկատուութեան վրայ:

Իրանահայերի թիւը 2017ին, ըստ առաջնորդ Սեպուհ արք. Սարգիսեանի					
Թեհրան	Սպահան	Թաւրիզ	Ուրմիա	Այլ քաղաքներ	Ընդհանուր
Շ. 60,000	5000	<2000	1200	15-20ական ընտանիք	70-80000

Ժողովրդագրական տուեալներ է ի յայտ բերել 2005 Նոյեմբերի 28ին Իրանի խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր

---

[16] Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 12:

[17] Կ. Վերանեան, *Իսրայէլի քաղաքականութեան վերաբերեալ*, «Նորավանք» ԳԿՀ, Երեւան, 2016, էջ 165:

[18] https://www.abc.net.au/news/2018-11-03/trump-and-iran-sanctions/10462528 մատչում՝ 30 Հոկտեմբեր 2023:

[19] https://armenpress.am/arm/news/724867/ մատչում՝ 13 Նոյեմբեր 2023:

[20] http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 մատչում՝ 02 Սեպտեմբեր 2023:

[21] Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 37:

Գէորգ Վարդանեանի եւ Թեհրանի հայոց թեմի անդամներ Եսայի Աբրահամեանի ու Ժիրայր Նազարեանի այցելութիւնը Սարի եւ Գորգան քաղաքների հայկական համայնքներ: Առաջինում նրանց դիմաւորել է 40 հոգի, իսկ երկրորդ դէպքում բացակայում են թուային տուեալները: Ըստ պատգամաւորի՝ Սարիի հայոց գերեզմանատունն ու շրջափակը մոռացուած տարածքի տպաւորութիւն են թողնում[22]: Փաստօրէն, այս շրջաններն արդէն 2000ականների սկզբներին հայաթափուած են եղել:

«ՀԱՅԱՁ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

Իրանահայութեան տեղաշարժերի հարցը ժամանակ առ ժամանակ գտնուել է հայօճախի գործիչների ուշադրութեան ներքոյ: Իրանի հայկական պարբերական մամուլի էջերում առկայ են այդ հարցի վերաբերեալ քննարկումներ, հարցազրոյցներ, մտահոգութիւններ Իրանի խորհրդարանում հայ պատգամաւորների, հոգեւոր առաջնորդների, ինչպէս նաեւ տարբեր մտաւորականների, մշակութային ու կրթական գործիչների հետ, իսկ երբեմն էլ առանձին վերլուծութիւններ: Հարկ է նշել, որ այդ բոլոր նիւթերում էլ առկայ են մի տեսակ ընդհանուր ոճի քննարկումներ, զգուշաւոր ու մեղմ քննադատութիւններ, յաճախ նկարագրական տեղեկութիւններ որեւէ հարցի շուրջ, իսկ երբեմն էլ հանգամանալից անդրադարձներ:

Հարկ է նկատել, որ սկսած 2010ականներից Իրանի հայօճախն իր վրայ կրում է սիրիական իրադարձութիւնների ազդեցութիւնը[23]: Հայերի արտագաղթին նպաստող գործոններից մէկն էլ այն է, որ հեռացողներն ազգականներ ունեն շատ երկրներում: Բացի այդ, Իրանում գործունէութիւն է ծաւալել «Հայազ» կոչուող հրէական կազմակերպութիւնը[24]:

ԱՄՆում կրթութիւն ստացած, 14 տարի այնտեղ բնակուած եւ այնուհետեւ Նոր Ջուղա վերադարձած նաւթային հարցերի մասնագէտ Հայդուկ Վարդեւանեանը կարծում է.

«Հայազ» կազմակերպութիւնը[25] հրէական է, ինչպէս շատերը գիտեն: Հրեաներն այն հեռակայ ծրագիրն ունեն, որ Հայաստանի մերձակայ երկրները դա-

---

[22] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 18 Յունուար 2006:

[23] Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 39:

[24] Նոյն, էջ 40:

[25] Իրանահայ հայրենակիցների պատմածի համաձայն, Իրանում գործունէութիւն է ծաւալել «ՀԱՅԱՁ» կոչուող հրէական մի կազմակերպութիւն, որը մասնագիտացած է յատկապէս հայերի արտագաղթի կազմակերպման հարցերում Միացեալ Նահանգներ: Իւրաքանչիւր անձից արտագաղթը դիւրին եւ առանց թղթաբանական քաշքշուքների կազմակերպելու համար, այդ կազմակերպութիւնը գանձել է 5000 ԱՄՆ դոլար, ընդ որում գումարն արտասահմանում ետ վերադարձնելու պայմանով: Որքան էլ որ զարմանալի ու անհաւատալի է, չնայած կազմակերպութեան իսրայէլական լինելու մեծ հաւանականութեանը, այն Իրա-

տարկեն հայից: ... Իսկ ինչն է պատճառը, որ արտագաղթը տարածուած է նոյնիսկ այլ փոքր ազգերի մօտ, պիտի ասեմ, որ անյարմար քարոզչութիւններն են[26]:

Փաստօրէն, արտագաղթին նպաստում են ոչ միայն ընկերային խնդիրները, այլ նաեւ քարոզչութիւնը, որն իր բովանդակութեամբ սպառնալիքի կամ գոնէ վախի մթնոլորտ է առաջացնում հայօճախներում:

Ըստ իրանահայ որոշ գործիչների՝ կրօնական փոքրամասնութիւնների հետ կապուած թեմաները դիտարկւում են երկրի անվտանգութեան համար բարձր ռիսկայնութեան հարցում՝ «չկայ համայնք, չկայ եւ հնարաւոր խնդիրը» կանխարգել բանաձեւով[27]: 2010ին Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի եւ Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան վարչութեան անդամ Ռուբէն Սարդարեանի տուեալներով Իրանում բնակուող փոքրամասնութիւնները 3000 դոլարով «Հայազ» կազմակերպութեանը անդամագրուելուց յետոյ մեկնում էին Աւստրիա, ետ ստանում վճարած գումարն ու դիւրին պայմաններով մեկնում ԱՄՆ[28]: Փաստօրէն, կարելի է արձանագրել, որ այդ կազմակերպութիւնը հաւաքագրել է միջինը 3000–5000 դոլար, եւ ինչ-որ տեղ սակարկման մեխանիզմ է կիրառել:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.

Ա. ՀՈԳԵՎԻՃԱԿՆԵՐ ՈՒ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐ ՕՏԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Տ. Սեպուհ արք. Սարգսեանի համոզմամբ արտագաղթի հարցում կայ միտում, եթէ հաշուի է առնւում գաղթողների՝ այդ երկրի պայմաններում համեմատաբար բարեկեցիկ ընկերային կարգավիճակը:

Այո, համարում եմ, որ միտումնաւոր է արւում: Որովհետեւ մեր գաղութի զաւակներից շատ-շատերը, ովքեր հեռացել են, ունէին տուն-տեղ, գործարան կամ համալսարանի դասախօսներ էին: Սա ոչ մի կերպ չի բացատրւում: Բացի միայն՝ մէկը միւսի ետեւից գնալու սովորութիւնից[29]:

նում փաստօրէն գործում է անխափան ու անարգել: Շատերն այն կարծիքին են, որ դեռեւս ԺԹ. դարում հիմնուած հրէական այդ կազմակերպութիւնը հայութեան արտագաղթի վրայ մեծ գումարներ է վաստակում: Կան նաեւ տեսակէտեր, որ դա տարածաշրջանի հայաթափման ծրագիր է: Ընդ որում, ուշագրաւն այն է, որ «ՀԱՅԱԶ»ի ծրագիրը տարածւում է միայն կրօնական փոքրամասնութիւնների վրայ, այսինքն մուսուլմանները ներգրաւուած չեն ծրագրի շրջանակների մէջ: Առաւել մանրամասն տե՛ս՝ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 40:

[26] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 24 Յունիս 2007:

[27] Ա. Փոլադեան, «Իրանի կրօնական փոքրամասնութիւններ», https://www.lragir.am/2010/03/27/33471/ մատչում՝ 22 Մայիս 2022:

[28] http://www.aaeurop.com/?p=3606 մատչում՝ 10 Մայիս 2022:

[29] http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 մատչում՝ 02 Սեպտեմբեր 2023:

Աւելին՝ «Արարատ» կազմակերպութեան Արուեստից միութեան նախագահ Արմինէ Սուքիասեանի խօսքով՝ արտագաղթողների մեծամասնութիւնը նոյնիսկ պատկերացում չունի արտերկրում առկայ դժուարութիւնների մասին. միայն լսում են, թէ կարճ ժամանակամիջոցում կարող են գնել տուն, մեքենայ եւն.[30]: Փաստօրէն, արտագաղթի ընթացքում առկայ են եղել չարդարացուած ու անհիմն ակնկալիքներ օտար երկրներում նոր կեանք սկսելու հարցում:

Արտագաղթի հոգեբանական նրբութիւնների ու պատճառների վերաբերեալ ուշագրաւ կարծիք է յայտնել միութենական գործիչ եւ թարգմանիչ Անահիտ Յովսէփեանը.

> Մարդիկ գնում են, եւ եթէ գնում են, այն էլ ոչ թէ մէկը, երկուսը, այլ՝ հարիւրաւորներ, ուրեմն՝ իրենց առօրեայի վրայ մի այնպիսի բան կայ ծանրացած, որ նրանց դառնացնում է, նրանց մարդկային արժանապատուութիւնը վիրաւորում է, թոյլ չի տալիս, որ լիարժէք ապրեն, այնպէս, ինչպէս ամէն մարդ կը ցանկանար ապրել ըստ իր որդեգրած սկզբունքների, ընդունակութիւնների, հնարաւորութիւնների եւ ապագայի նկատմամբ ունեցած իղձերի:

Նրա մէկ այլ խօսքով՝ «*Լինելով մի փոքրաթիւ համայնք մի բազմամիլիոնանոց ընդհանրութեան մէջ՝ մենք ի վիճակի չենք որեւէ հասարակական իրավիճակ նոյնիսկ իր տեղից շարժել*...»[31]: Ակնյայտ է, որ այդ հարցում ազգային իշխանութիւններից ինչ-որ բան ակնկալելն արդիւնք չի ունենայ, ինչպէս նաեւ համայնքային կառոյցները - յայտնի որպէս ազգային իշխանութիւններ անուամբ - այդ հարցում եւս անզօր են, քանի որ նրանց լիազօրութիւնները տարածւում են միայն ներհամայնքային խնդիրների լուծման տիրոյթում, մինչդեռ ընկերա-տնտեսական մեծ խնդիրները լուծելու իրաւասութեամբ օժտուած են միայն երկրի իշխանութիւնները:

«Գոհար» ուղեցոյց դպրոցի փոխտեսուչ, Հայ Ուսումնասիրաց «Չհարմահալ» միութեան գրասենեակի աշխատակից, երիտասարդական թատերախմբի ղեկավար Հայրիկ Աղանեանի խօսքով՝ արտագաղթող երիտասարդների մօտ հիմնական հարցը եղել է բնակարանը կամ աշխատանք չունենալը: Ըստ նրա տուեալների՝ ամուսնացած զոյգերի մի փոքր մասը արտասահման հասնելուն պէս ամուսնալուծուել է[32]: Փաստօրէն, արտագաղթի հետեւանքով տեղի են ունեցել ամուսնալուծութիւններ, որոնց թուային տուեալների վերաբերեալ յստակ տեղեկութիւն չկայ, քանի որ արտասահմանում թեմական կառոյցների բացակայութեան կամ դրանց լինելու դէպքում իրանահայութեան անճանաչելիութեան ու անտեղեակութեան պատճառով չեն գրանցուել այդ ցուցանիշերը:

---

[30] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 30 Մայիս 2007:
[31] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 10 Յունիս 2007:
[32] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 13 Յունիս 2007:

Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» դպրոցի փոխտեսուչ, տեղի «Արարատ» միութեան մշակութային միաւորի վարչութեան անդամ եւ «Կռունկ» ասմունքի խմբի պատասխանատու Ռիմա Սիմոնեան-Օհանեանի խօսքով՝

Համաճարակի է նմանւում այս արտագաղթը. արդէն իսկ չի կարելի ասել՝ ժողովուրդը ծրագրաւորուած եւ մտածուած է գաղթում, այլ մէկը միւսին նայելով, ակամայ, երբեմն էլ ի զարմանս բոլորի՝ խոր կսկիծով՝ նոյնիսկ չիմանալով պատճառը[33]:

Իսկ գրող, բանաստեղծ Վարանդն էլ ընդգծում է.

«Ինչ-ինչ հոգեբանական-հասարակական մեր այս պայմանականօրէն նուազած համայնքում էլ հիւանդութեան ախտանշաններ են երեւում...»[34]:

Փաստօրէն, այս դէպքում էլ արտագաղթին նպաստել է հայութեան զանգուածային «սարսափը», որն անմիջականօրէն պայմանաւորուած է եղել արտաքին գործօններով: Հենց դա է պատճառը, որ 2000ականների սկզբների դէպլերն ու 2010ականների խուճապը յանգեցրեցին որոշակի եւ ինչ-որ տեղ անկազմակերպ գործողութիւնների՝ արագացուած արտագաղթի կամ անգամ կարելի է կիրառել '«փախուստ» երբեմնի բնակավայրերից' արտայայտութիւնը: Ընդ որում պէտք է ընդգծենք՝ խաղաղ պայմաններում:

Սպահանի համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան բաժնի դասախօս Հրայր Շահնազարեանը քննարկելով հայօճախի խնդիրները՝ բարձրացնում է մէկ այլ մտահոգիչ հարց.

Պայմանների թելադրանքով նօսրացել է տեսլականով օժտուած մտաւորականների թիւը: Հաղորդակցական հնարաւորութիւնների եւ համացանցի անսանձ ներխուժումը համայնքից ներս ստեղծել են նոր գրաւչութիւններ: Հայաստանը, հայ ժողովուրդը եւ հայ մշակոյթը աւելի քիչ ներշնչանքի աղբիւր են եւ ընդհակառակը այս ակունքներից հեռանալու տրամադրութիւններն են առկայ[35]:

Ինչ խօսք, համայնքի շարժիչ ուժը մտաւորականներն են, որոնց գործողութիւնները միշտ էլ ընդօրինակելի են եղել նրա շարքային մարդկանց համար: Փաստօրէն, այս դէպքում եւս նրանց գործողութիւնները փոխկապակցուած են եղել:

Այսպիսով, համայնքային գործիչների վերոնշեալ նկատառումները եւ հրապարակի վրայ եղած այլ նիւթերը հիմք են տալիս եզրակացնելու, որ եթէ 2000ականների սկզբներին Իրանում հայութեան թիւը կազմել է 80.000, ապա այսօր այն նուազել է մինչեւ լաւագոյն դէպքում 50.000ի: Արտագաղթի հետեւանքով հայօճախի թիւը 20 տարուայ կտրուածքով

---

[33] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 20 Յունիս 2007:

[34] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 11 Նոյեմբեր 2006:

[35] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 06 Նոյեմբեր 2006:

նուազել է բարեկեցիկ պայմաններով ապահովուած մինչեւ աւելի քան 30.000 (իսկ որոշ տուեալներով մինչեւ 40.000) մարդով: Այլ կերպ ասած՝ հայօճախը միայն 21րդ դարի առաջին քսանամեակում կրճատուել է մինչեւ 50%: Անկասկած, դա մեծ թիւ է, եթէ հաշուի առնենք այն կարեւոր փաստը, որ այդ տոկոսային կազմի մէջ զգալի թիւ են գոյացնում ուսանելու նպատակով արտերկիր մեկնած երիտասարդները եւ դպրոցահասակ երեխաները: Ահա թէ ինչու հայօճախում նկատւում է դպրոցների քանակի որոշակի նուազում[36]: Ըստ էութեան վերարտադրողական տարիքի բնակչութեան արտահոսքը զգալիօրէն թուլացրել է հայօճախը:

Բ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հարկ ենք համարում ընդգծել, որ ընկերատնտեսական խնդիրներ ունենալով հանդերձ, արտագաղթի ուղին բռնած հայերը Իրանից հեռացել են ոչ թէ կեանքին վտանգ սպառնացող առաջնահերթ որեւէ խնդրի կամ փախստականի կարգավիճակ ունենալու պատճառով (ինչպէս որ եղաւ սիրիահայերի պարագայում), այլ դիմել են արտագաղթի տարբերակին աւելի լաւ կեանքով ապրելու մղումով դրդուած: Հենց սա էլ 21րդ դարի սկզբին իրանահայերի տեղաշարժերի կարեւոր առանձնայատկութիւնն է եւ տարբերակիչը:

2014 Հոկտեմբերի 20ին՝ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին ընդառաջ, Իրան այցելած Արամ Ա մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսն, անդրադառնալով արտագաղթի մտահոգիչ երեւոյթին, կոչ է ուղղել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի բակում հաւաքուած հազարաւոր հայորդիներին.

> Բանաստեղծին բառերով խնդրելու պէս կը պահանջեմ ու պահանջելու պէս կը խնդրեմ Իրանի մեր ժողովուրդի սիրելի զաւակներէն: Մի՛ հեռանաք Նոր Ջուղայէն, Շահնշահրէն, Թեհրանէն, Թաւրիզէն եւ Ուրմիայէն: Իսկ եթէ ոմանք ինչ-ինչ պատճառներով պարտաւորուած կ'ըլլան հեռանալու այս երկրէն, անոնք միայն մէկ հասցէ պէտք է ունենան՝ Հայաստան, միայն Հայաստան...[37]:

Այսպիսով, հարցը խորապէս մտահոգում է Հայոց Եկեղեցուն, որն Իրանում իր ներկայութիւնն ապահովում է պատմական մեծ անցեալ ունեցող տեղի երեք թեմերով ու թեմական կառոյցներով: Ընդ որում Ատրպատականի հայոց թեմի հոգեւոր-վարչական սահմանների ներքոյ են գտնւում Հայ Առաքելական եկեղեցու այնպիսի նուիրական սրբավայրեր, ինչպիսիք են՝ ԵՈՒՆԵՍԿՕի համաշխարհային ժառանգութեան ցանկում գրանցուած Ս. Թադէի վանքը (Մակու, Արեւմտեան Ատրպատական նահանգ), Ս. Ստե-

---

[36] https://news.am/arm/news/24342.html , մատչում՝ 20 Մայիս 2022:

[37] «Նոր Ջուղան հաւատարիմ պէտք է գտնուի իր անցեալին, որպէսզի վերանորոգ հաւատքով կերտէ իր ապագան», *Հասկ*, Հոկտեմբեր, 2014, էջ 957–59:

փանոս Նախավկայի վանքը (Ջուլֆա-Դարաշամբ, Արեւելեան Ատրպատական նահանգ), Ծործորի Ս. Մարիամ Աստուածածին մատուռը (Մակու, Արեւմտեան Ատրպատական նահանգ)[38], ինչպէս նաեւ դեռեւս 1606ին հիմնուած Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքը[39], որը ոչ միայն Նոր Ջուղայի ու իրանահայութեան, այլեւ համայն հայ ժողովրդի պարծանքն է:

Կարեւոր է նկատի ունենալ, որ իսլամական միջավայրում հայօճախն իր դիմագիծը պահպանում է կրթօջախների միջոցով, որը ե՛ւ դիւրին է, ե՛ւ դժուարին: Դիւրին է, քանի որ իսլամական միջավայրում գրեթէ բացառուած են խառնամուսնութիւնները, իսկ դժուար է, քանի որ հայօճախի կառոյցներն իրենք են հոգում ազգային մշակոյթը եւ ինքնութիւնը վառ պահելու համար նախատեսուած կարիքները: Թեհրանում ուսուցման պետական ծրագրով գործում է 16 դպրոց եւ 4 մանկապարտէզ[40], որոնք համարւում են հայօճախի սեփականութիւնը:

Յիշարժան է 2006 Մայիսի 9ին տեղի ունեցած պատգամաւորական ժողովի նիստում Սեպուհ արք. Սարգսեանի ելոյթը: Սրբազանը բարձրաձայնում է արտագաղթի մասին թուերով՝ միաժամանակ քննադատելով այն մարդկանց, ովքեր խուճապ էին ստեղծում հայօճախում: Ըստ այդ մարդկանց՝ հայօճախից հեռացել են 18 հազար, իսկ ոմանք էլ պնդում են՝ 23 հազար մարդ: Մինչդեռ դրանք, ըստ Սեպուհ սրբազանի, չափազանցուած տուեալներ էին, քանի որ մինչեւ 2006 Մայիս ամիսը 2400 կամ 2450 հոգի էին ստացել վկայագիր եւ գրել դիմում: Աւելին, 2005 Հոկտեմբերի 1ից մինչեւ 2006 Մայիսի 9ը՝ 2780 հոգի վերցրել էր իր վկայագիրը: Սակայն նրանցից ոչ-բոլորն են գնացել տարբեր պատճառներով, քանի որ համեմատելով հայօճախի թիւը հայկական դպրոցներում սովորող 5650 աշակերտների հետ, ինչպէս նաեւ պարսկական դպրոցներում սովորող եւս շուրջ 1000 աշակերտների թուի հետ, ստացւում է, որ հայօճախն ունէր 6500 կամ 6800 աշակերտ: Հաշուի առնելով, որ հայօճախի թուի 100ից 10ը աշակերտութիւնն է, նշանակում է հայօճախի թիւը կազմել է 60-70 հազար: Ըստ սրբազանի՝ 60 կամ 70 հազար կամ 55 հազար հայօճախի կեանքում 2000ը կամ 3000ը մեծ թիւ չէ, մտահոգիչ թիւ է, բայց խուճապի մատնուելու կարիք չկայ[41]:

---

38 https://iran.mfa.am/hy/%D5%A1%D5%BF%D6%80%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%A9%D5%A5%D5%B4/ մատչում՝ 12 Դեկտեմբեր 2023:

39 *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, «Հայկական հանրագիտարան» հրատ., Երեւան, 2002, էջ 135-36, 386-87, 805, 917-18:

40 http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003 մատչում՝ 02 Հոկտեմբեր 2023:

41 «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Մայիս 2006:

Յաջորդ տարում՝ 2007 Մայիսի 10-16ին, տեղի է ունեցել Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի տարեկան նստաշրջանը, որի ընթացքում եւս քննարկուել է արտագաղթի խնդիրը: Սեպուհ արք. Սարգսեանն իր խօսքում ընդգծել է.

> Գաղթը մեր ժողովրդի կեանքի անբաժանելի մի երեւոյթ է եղել պատմութեան ընթացքում, սակայն այս օրերում այն, ինչ կատարւում է այստեղ, դժուար բացատրելի երեւոյթ է[42]:

Մտահոգիչ է դարձել համայնքում առկայ այն հարցադրումը, թէ երկիրը թողնելու համար կարծես պատճառաբանութեան կարիք չկայ, աւելին՝ նա, ով չի պատրաստւում գաղթել, պիտի պատասխանի, թէ ինչու՛ է մնում: Ստացւում է՝ գնալը բնական է, իսկ մնալը՝ անբնական, բացատրութեան կարօտ:

Վերջին տարիներին Իրանի հայ կաթողիկէ համայնքի առանձին ներկայացուցիչներ մշտական տեղափոխուել են Հայաստան: Սակայն հայ կաթոլիկների շրջանում եւս առկայ է արտագաղթ, յատկապէս ԱՄՆ, Կանադա, Աւստրալիա եւն.: Ինչ վերաբերում է Իրանում Հայ Աւետարանական եկեղեցուն, ապա նրա հետեւորդների թիւը 300–350 հոգի է[43]:

Աղիւսակ 1. Թեհրանի հայոց թեմի քաղաքացիական գրանցման տուեալները 1995-2006[44]՝ որպէս տեղաշարժերի հետեւանք

	1995	-96	-97	-98	-99	2000	-01	-02	-03	-04	-05	-06
Մկրտթն.	456	476	565	512	562	1067	337	297	282	278	302	410
Պսակ	379	355	297	331	393	350	266	235	261	261	250	310
Ապիրզն.	18	28	23	24	31	27	27	31	41	28	33	40
Մահ	424	499	491	461	495	435	529	480	522	482	545	500

Ըստ վերոնշեալ աղիւսակի՝ եթէ 1995ին մկրտուել է 456, ապա 2000ին՝ 1067, որը եղել է ամենամեծ ցուցանիշն առ այսօր: Մինչդեռ դրան յաջորդած տարիներին նուազել է՝ տատանուելով 337-410ի սահմաններում: 12 տարուայ ընթացքում՝ 1995-2006 թթ., Թեհրանի հայոց թեմում մկրտուել է 5544 հոգի: Այդ թիւը բաժանելով նշուած տարիների մէջ ստացւում է համայնքում տարեկան միջինը կազմել է 462 ծնունդ:

---

[42] http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2376 , մատչում՝ 29 Մայիս 2022:

[43] Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 65, 186:

[44] «Հաղորդագրութիւն *դիւան ազգային առաջնորդարանի Թեհրանի հայոց թեմի*», *Լոյս,* Օգոստոս, 123:2006, էջ 4: Ամենամեայ հաղորդագրութիւնները հրապարակուել են նշուած օրաթերթի տարբեր տարիների նշուած համարներում նոյն վերնագրով), *Ալիք օրաթերթ*, 30 Յունուար 2002, 22 Յունուար 2003, 08 Փետրուար 2004, 23 Յունուար 2005, 01 Փետրուար 2007:

Իրավիճակը մտահոգիչ է նաեւ պսակի հարցում: Այսպէս, նշուած տարիներին պսակադրուել են ընդամէնը 3688 զոյգ, որից 351ը ամուսնալուծուել է: Ընդ որում, եթէ 1995ի դրութեամբ այն կազմել է 18, ապա 2006ին աւելի քան կրկնապատկուել է՝ 40 պարագայ: Ակնյայտ է, որ այս դէպքում եւս հայօճախում աւելանում են ներքին եւ արտաքին որոշ տեղաշարժեր: Ինչ վերաբերում է մահացութեան տուեալներին, ապա եթէ 1990ականներին այն տատանուել է 424-435ի միջեւ, բացի 1999ից, ապա 2001ից այն հատել է 500ի սահմանը, որը կարծես հաւաստում է հայօճախի ծերացման մասին:

Գ. ԻՐԱՆԻ ՀԱՅՕՃԱԽԻ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինչ վերաբերում է վերջին տարիներին հայօճախի խնդիրներին, ապա 2018 Նոյեմբերի 24ին Թեհրանում լոյս տեսնող *Ալիք* ազգային, հասարակական եւ քաղաքական օրաթերթի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանի գնահատմամբ՝ հայօճախն արդէն ընտելացել է ներկայ պայմաններին եւ շարունակում է իր բնականոն կեանքը[45]: Փաստօրէն, ներկայումս հայօճախում խոշոր տեղաշարժերը դադարել են, իսկ մնացածներն էլ փորձում են յարմարուել նոր ու դժուարին իրողութիւններին: Յիրաւի, նօսրացած թուով հայօճախում այլեւս խնդրայարոյց են բազմաթիւ կառոյցներ, այդ թւում՝ առաջնահերթ դպրոցներ պահելը, քանի որ դա ենթադրում է ֆինանսական զգալի միջոցներ, որը հայօճախի կառոյցները դժուարութեամբ են գոյացնում: Ստացւում է, որ փոքրաթիւ աշակերտութիւն ունեցող դպրոցների համար այսօր վճարւում են նաեւ թափուր մնացած տեղերի համար: Ահա թէ ինչու օրակարգային խնդիր է դարձել տեսականում դպրոցների միաւորումը, որը գործնականում կարող է նոր դժուարութիւններ յառաջացնել աշակերտների ծնողների համար դպրոցների հեռաւորութեան պատճառով:

Միւս կողմից ինչ որ իմաստով հայօճախը կորցրել է նախկինում ունեցած կշիռը տեղաշարժերի հետեւանքով: Ուստի, անհրաժեշտ է հայօճախի գործիչներից առաւել ջանքեր ներդնել հայութեան ներուժը համախմբելու համար: Իդէպ, նշենք, որ այս խնդիրը հիմնականում վերաբերում է թեհրանահայութեանը, քանի որ Սպահանի եւ Ատրպատականի պարագայում խնդիրն անհամեմատ աւելի մեղմ է, որոնք միասին լաւագոյն դէպքում կարող են կազմել ամբողջ իրանահայութեան շուրջ 8-10%ը:

Այսպիսով, տեղաշարժերով պայմանաւորուած ժողովրդագրական խնդիրը դարձել է լուրջ մարտահրաւէր Իրանի հայօճախի համար: Այդ պատճառով ոչ միայն թուային ցուցանիշերով է նուազել հայօճախը, այլեւ

---

45 https://aparaj.am/%d5%ab%d6%80%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b5%d5%b6%d6%84%d5%ab%d6%81-%d5%b6%d5%b8%d6%80-%d5%a1%d6%80%d5%bf%d5%a1%d5%a3%d5%a1%d5%b2%d5%a9-%d5%b9%d5%ab-%d5%bd%d5%ba/ , մատչում՝ 23 Դեկտեմբեր 2023:

տարբեր մասնագէտներով, իսկ հայօճախի բազմաթիւ այլ կառոյցներ պահելը՝ առաջնահերթ կրթօջախները, միութիւնները, դարձել են լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնուածութիւն: Ահա այստեղ է, որ առաջնահերթ են դառնում դպրոցները միաւորելու խնդիրը, որ հայօճախի կառոյցները կարողանան դրանք ֆինանսաւորել, հակառակ դէպքում ստիպուած են լինում մեր օրերում ընդհուպ 10 հոգի չկազմող դասարանների պատճառով պահել դպրոցներ: Ակնյայտ է, որ այդ դէպքում բազմապատկւում են ծախսերը, մինչդեռ սովորողները սակաւաթիւ են:

Ինչ վերաբերում է եւրոպական կամ արեւմտեան այլ երկրներ արտագաղթած բազմաթիւ իրանահայերին, ապա տարիների ընթացքում նրանք կարողանում են քիչ թէ շատ վերակազմակերպուել, որոշ դէպքերում շարունակելով զբաղուել համայնքային կեանքով՝ անդամակցելով տուեալ երկրում արդէն իսկ առկայ հայկական կառոյցներին, հիմնականում թեմական-եկեղեցական, իսկ դրանց բացակայութեան դէպքում իրենք են նախաձեռնում եւ ստեղծում այդպիսիք: Այլ խօսքով՝ օտար միջավայրում շարունակում են պահպանել իրենց ինքնութիւնը:

Խնդրոյ առարկայի շրջանակներում արժէ նշել, որ հայութեան թուային տարբերութիւնը տարբեր գործիչների մօտ պայմանաւորուած է նաեւ այդ երկրի խորհրդարանում երկու պատգամաւոր ունենալու հանգամանքով: Դեռեւս 1908 Յունուարին Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարեանցը պաշտօնական գրութեամբ դիմել է մեջլիսի նախագահին՝ թոյլատրելու պարսկահայ ժողովրդին այնտեղ ունենալու երկու պատգամաւոր: Նոյն թուականի Մայիսի կէսերից հարցն սկսել էր շրջանառուել մեջլիսում[46]: Բայբուրդեանը գրում է, որ Իրանի խորհրդարանում իր ներկայացուցիչները ունենալու իրաւունքը իրանահայերը ստացել են 1905-11ի իրանական յեղափոխութեան ժամանակ[47]:

Փաստօրէն, աւելի քան մէկ դար իրանական խորհրդարանում հայութեան ներկայութեան քաղաքական մշակոյթը որոշակիօրէն պայմանաւորուած է եղել նաեւ այդ երկրում հայութեան մեծ թուով լինելու փաստով եւ աւանդոյթի ուժը հիմքեր է տալիս նրանց Իրանի խորհրդարանում ունենալ երկու պատգամաւոր: Նկատենք, որ Իրանի կրօնական փոքրամասնութիւնները՝ հայերը, ասորիները, հրեաները եւ զրադաշտականները միասին վերցրած զբաղեցնում են 5 տեղ, որից երկուսը պատկանում է հայերին:

Տարածաշրջանային նշուած գործընթացներում է իր գործունէութիւնը ծաւալում Իրանի հայօճախը: Դեռեւս 2000ի սկզբին վերահրատարակու-

---

[46] Հ. Սիմոնեան, *1905–1912 թթ. պարսկական յեղափոխութիւնը եւ հայերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017, էջ 167:

[47] Վ. Բայբուրդեան, *Իրանն այսօր (տեղեկատու)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1999, էջ 309:

թեան առթիւ *Արաքս* գրական, մշակութային, հասարակական շաբաթաթերթը իր «Մեր խօսքը» վերնագրով խմբագրական բաժնում գրում է.

> Մեր աչքերի առջեւ նօսրանում ու մարում է իրանահայ պատմական համայնքը: Այն ենթարկուած է անշարժութեան եւ անգործունէութեան: Ամէնուրեք անտարբերութիւն է, ընկրկում ու նահանջ՝ «նահանջ առանց երգի»: Իրանահայութիւնը չի գտնում իր տեղն ու դերը համահայկական կեանքում...[48]:

Ուշագրաւ է, որ համեմատութեան մէջ է դրւում իրանահայութեան դերը համահայկական օրակարգում, մինչդեռ այն նախ եւ առաջ կապուած է իրանական հանրային կեանքի առանձնայատկութիւնների հետ:

Դ. ԻՐԱՆԱԿԱՆ ՌԻԱԼԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՕՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻՆ

Յայտնի է, որ իւրաքանչիւր երկրի կենսամակարդակը պայմանաւորուած է նաեւ տուեալ երկրի ազգային դրամի արժէքով եւ տնտեսութեամբ:

Այդ տեսակվտից յաջորդ կարեւոր հանգամանքն այն է, որ Իրանում եօթ ամսուայ ընթացքում տեղի է ունեցել 70% ազգային դրամի արժեզրկում: Եթէ 2019 Դեկտեմբեր ամսին ԱՄՆ 1 դոլարը համարաժէք էր 125.000 իրանական ռիալի, ապա 2020 Յուլիսի սկզբին այն անցնում է աւելի քան 220.000 ռիալը[49]: Մինչդեռ 7 տարուայ ընթացքում (2013-20), արժեզրկումը կազմել է շուրջ 700%, այսինքն՝ շուրջ 33.000 ռիալից հասել է վերոնշեալ 220.000 ռիալին: Աւելի ակնառու է 10 տարուայ ընթացքի արժեզրկումը. ռիալը դոլարի նկատմամբ արժեզրկուել է 2000%ով՝ 220.000 ռիալի դիմաց կազմելով 11.000:

Ահա թէ ինչու Իրանի խորհրդարանը 2020 Մայիսի 4ի նիստում հաւանութեան է արժանացրել պետութեան դրամավարկային ու բանկային քաղաքականութեան մասին օրէնքում փոփոխութիւններ կատարելու վերաբերեալ նախագիծը: Իրանի Իսլամական հանրապետութիւնը ռիալից կ'անցնի թումանին (1 թումանի արժէքը կը համապատասխանի 10.000 ռիալի)[50]: Այդպիսով իրանական դրամական նոր միաւորը՝ «թուման»ը՝ 3-4 զրօներով կը հեշտացնի ընդամէնը դրամաշրջանառութեան աստղաբաշխական հաշուարկները, որը բնաւ էլ չի խոստանում երկրի ընկերատնտեսական վիճակի բարելաւում: Ակնյայտ է, որ ֆինանսական ճգնաժամը ազդելու է հայօճախի հասարակական եւ ազգային կեանքի վրայ:

---

[48] «Մեր խօսքը», *Արաքս շաբաթաթերթ*, 1(84):2000, էջ 3:

[49] Հ. Խալոյեան, «Մինչեւ երբ կը դիմանան Իրանն ու իրանահայութիւնը», *Ալիք*, 08 Յուլիս 2020, էջ 3:

[50] Iran changes national currency from 'rial' to 'toman', May 4, 2020, https://en.irna.ir/news/83774988/Iran-changes-national-currency-from-rial-to-toman

Ըստ էութեան հայութիւնն այս երկրում ապրում է արտակարգ իրավիճակներով պայմանաւորուած գործընթացների ազդեցութեան ներքոյ, եթէ հաշուի առնենք, որ դեռեւս մօտ ապագայում փոքր է հաւանականութիւնը նշուած պետութիւնների միջեւ բնականոն յարաբերութիւններ վերաճելու ուղղութեամբ: Ուստի, հայօճախի խնդիրները սերտօրէն առնչւում են նաեւ ՀՀ անվտանգային միջավայրին: Աւելին, հաշուի առնելով Իրանի զբաղեցրած ծանրակշիռ տեղն ու դերը Սիրիայի եւ Իրաքի հասարակական-քաղաքական կեանքում, ուրուագծւում է նրա անզիջում պայքարը տարածաշրջանում:

2000ի սկզբին *Արաքս* շաբաթաթերթն արտագաղթի հարցի վերաբերեալ գրում է.

> Վերջին տարիներին գարնան ձեան նման հալւում է համայնքը: Շատ հայ ընտանիքներ կամ միայնակ երիտասարդներ բռնում են գաղթի ճանապարհը: Տարիների տքնաջան աշխատանքով կուտակած ունեցուածքը թափում էք եւ ընկնում անյայտ կեանքի յորձանուտը, հեշտութեամբ հաւատում մարդկանց, որոնք իրենց գունաւոր պատմութիւններով խելքահան են անում ձեզ եւ մի կլորիկ գումարով յանձն առնում ձեզ հասցնել Թուրքիա, այնտեղից Եւրոպա[51]:

Յօդուածագիրն արդարացիօրէն կասկածով է վերաբերում այդ հարցում Թուրքիայի շահագրգռութիւնը եւ նրա տարածքով գաղթի կազմակերպումը:

21րդ դարի սկզբին իրանահայութեան տեղաշարժերի եւ դրանց առանձնայատկութիւնների կարեւոր բաղադրիչ են կազմում նաեւ նրա ներկայացուածութիւնը համահայկական նշանակութեան իրադարձութիւններին: Այսպէս, 2002 Մայիսի 27ին տեղի է ունեցել Հայաստան-Սփիւռք երկրորդ խորհրդաժողովը, որին Սփիւռքից մասնակցել է 1500 հոգի: 48 երկրի սփիւռքահայ պատուիրակութիւններից ամենամեծ խումբը պատկանել է ռուսահայերին՝ 300, իսկ երկրորդ տեղը զբաղեցրել են իրանահայերը՝ 163 հոգի[52]:

2004ին թեհրանահայութեան հասարակական ու քաղաքի թաղային դրուածքի պայմանները նկատի ունենալով՝ թեմական խորհուրդը անհրաժեշտ է համարել հայօճախի բնակչութեան վիճակագրական տուեալները հաւաքագրել եւ ստոյգ տեղեկութիւններ ունենալ քաղաքամասերում բնակուող ընտանիքների թուային վիճակի մասին: Այդ նպատակով թեմական խորհուրդը կեանքի է կոչել համայնքային ուսումնասիրական յանձնախումբ[53]:

---

[51] Գոհար Խաչատրեան, «Ուր էք գնում, մարդ աստծոյ», *Արաքս շաբաթաթերթ*, 1(84):2000, էջ 9:

[52] «Հայաստան-Սփիւռք 2-րդ խորհրդաժողովի լուսանցքում», *Արաքս շաբաթաթերթ*, 28(III):2002, էջ 3-4:

[53] Հաղորդագրութիւն ԹՀ թեմական խորհրդի գործունէութեան 10 Փետրուարի առ 30 մայիսի 2004 թ., *Ալիք օրաթերթ*, 07 Յուլիս 2004:

2004 Հոկտեմբերի 4ին Թեհրանի հայոց թեմի (ԹՀԹ) 13րդ պատգամաւորական ժողովի կենտրոնական յանձնախումբն իր հերթական նիստերի ընթացքում քննարկել է քաղաքամասերում կատարուած բնակչութեան թուային վիճակագրական տուեալները: Փաստէօրեն, ԹՀԹ կանոնադրութեան համաձայն այն նպատակ է ունեցել ճշտելու ընտրուող պատգամաւորների թիւը, որն էլ յանձնուել է թեմական խորհրդին եւ ստացել հաստատում: Ըստ այդմ Թեհրանի հայաբնակ քաղաքամասերի ընտրուելիք պատգամաւորների թիւը մնացել է նոյնը, բացառութեամբ Զէյթուն քաղաքամասի, որը բնակչութեան աճ արձանագրելու հետեւանքով՝ պատգամաւորների թիւը 8ից դարձել է 9, մինչդեռ Մաշհադի հայ բնակչութեան թուի խիստ նուազման հետեւանքով՝ հնարաւոր չի եղել պատգամաւոր ունենալ այդ շրջանից: Ինչ վերաբերում է Քերմանշահի եւ Համադանի շրջաններին, ապա որոշուել է դրանք միասնաբար ներկայացնեն 1 պատգամաւոր՝ 13րդ շրջանի պատգամաւորական ժողովի համար[54]:

Ըստ 2004ի պատգամաւորական ժողովի Կենտրոնական ընտրական յանձնաժողովի (ԿԸՅ) ատենադպիր Սայեաթ Բաբումեանի՝ ԹՀԹ թեմական խորհրդի կողմից ստեղծուել է կենտրոնական ընտրական յանձնախումբ, որը Թեհրանի քարտէզի հիման վրայ քաղաքամասը բաժանել է 5 մասի՝ Անզալիի, Ռաշտի, Սարիի, Գորգանի, Մաշհադի եւ Քերմանշահի եկեղեցադպրոցական հոգաբարձութիւն: Դրանցից մէկական ներկայացուցիչ է հրաւիրւում, որ այդ քաղաքների համայնքները եւս ներկայացուած լինեն: Ըստ համայնքի վերանայուած կանոնադրութեան՝ իւրաքանչիւր 2000 հոգու դիմաց 1 պատգամաւորի ընտրութեան իրաւունք գոյութիւն ունի[55]: Այսպիսով, ստացւում է, որ վերոնշեալ քաղաքների ենթօճախները միասին կազմել են 2000 հայ:

Իրանի այլ բնակավայրերում հայութեան թուի վերաբերեալ ժամանակ առ ժամանակ առկայ են վիճակագրական բնոյթի որոշ տուեալներ, որոնք հրապարակուել են առաջնահերթ ոչ թէ այդ խնդրին անդրադառնալու նպատակով, այլ հասարակական մի շարք առօրէական նշանակութեան հարցեր դիպուածաբար քննարկելիս: Այդ մասին են վկայում 2005ի դրութեամբ Ուրմիոյ Ռահուա գիւղում հայ եւ ասորի[56], իսկ Շիրազում հայ (շուրջ 30 ընտանիք) ենթօճախներին անդրադառնալը[57]:

Իրանահայութեան ժողովրդագրական իրավիճակի, ինչպէս նաեւ այդ հանգամանքով պայմանաւորուած հայկական մամուլի ընթերցանութեան հետաքրքրութեան վերաբերեալ *Արաքս* թերթի գլխաւոր խմբագիր Մովսէս Քեշիշեանը հաստատում է, որ 2002ի դրութեամբ 3000 տպաքանա-

---

[54] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 04 Հոկտեմբեր 2004:
[55] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 05 Հոկտեմբեր 2004:
[56] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 20 Յուլիս 2005:
[57] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 10 Սեպտեմբեր 2005:

կից մօտ 2500ը բաժանուել է երկրի ներսում, իսկ այն մասը, որ դուրս է ուղարկուել դրանից քիչ վերադարձ է ունեցել, որպէս դրամական գումար, թէեւ բաժանորդները, որ ունեցել է դրանցից ստացել է գումարներ, բայց համեմատած իր ծախսերին, որ ուղարկուել է, քիչ է եղել: Մէկ թերթի համար աւելի շատ փոստային ծախս է կատարուել, քան եղել է թերթի գինը[58]:

Յիշարժան է 2006 Մայիսի 9ին տեղի ունեցած պատգամաւորական ժողովի նիստում Սեպուհ արք. Սարգսեանի ելոյթը: Սրբազանը բարձրաձայնում է արտագաղթի մասին թուերով՝ միաժամանակ քննադատելով այն մարդկանց, ովքեր խուճապ էին ստեղծում հայօճախում: Նշելի է, որ սրբազանին Սասուն թաղամասում հարց ուղղած շարքային մարդկանցից ոմանք յայտնել են, թէ հայօճախից հեռացել են 18 հազար, իսկ ոմանք էլ՝ 23 հազար մարդ եւ մինչդեռ դրանք, ըստ սրբազանի չափազանցուած տուեալներ էին: Հարկ է նշել, որ Սեպուհ սրբազանին համայնքի արտահոսքի հարցով հետաքրքրուել էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը հանդիպման ընթացքում՝ նկատելով, որ քչերն էին գալիս ՀՀ, իսկ մեծ մասը գնում արտասահման[59]: Այդ օրերին (15 Մայիս 2006), *Արաքս* թերթը տագնապով գրել է «Քահանան փախաւ» վերնագրով մի յօդուած՝ չնշելով, որ փախչողից բացի կային մնացող քահանաներ: Փաստօրէն, տպագիր մամուլի որոշ օրգաններ եւս քննադատաբար են մօտեցել ստեղծուած իրավիճակին, իսկ ինչ որ տեղ էլ ակամայից խուճապային տրամադրութիւններ են տարածել հայօճախում:

Թերեւս նաեւ ի հակադրութիւն վերոնշեալին՝ 2006ին Բէյրութի *Ազդակ* օրաթերթին տուած հարցազրոյցում Սեպուհ արք. Սարգսեանն ընդգծում է, որ Թեհրանում գործում է 8 հայկական եկեղեցի, եւս երկու եկեղեցու վերանորոգման նպատակով պետութիւնը յատկացրել էր 65 հազար դոլար: Հայօճախում գործում էին 28 միութիւններ, մշակութային կազմակերպութիւններ, թատերական, պարային, երաժշտական միաւորներ, տեղի էին ունենում դասախօսութիւններ, ուխտագնացութիւններ եւ տարաբնոյթ հանդիսութիւններ: Սրբազանի տուեալներով՝ մէկ տարուայ կտրուածքով արտագաղթող իրանահայերին տրուել է ընդամէնը 2930 վկայագիր, եւ նրանց մի մասը չի մեկնել: Միայն Թեհրանում հաշուում էր 5600 աշակերտ, եւս 1500 աշակերտ յաճախում էին պետական կամ մասնաւոր դպրոցներ: Այդպիսով դա նշանակում էր, որ եթէ աշակերտութեան թիւը սա է, եւ եթէ այն կազմում է համայնքի 100 հոգուց տասը, ուրեմն՝ համայնքի թիւը հասնում էր գոնէ 70 հազարի: Ըստ սրբազանի՝ 70.000ի համար 2500-3000ը թէեւ թիւ է, սակայն այդքան էլ մտահոգիչ չէ:

---

[58] «Հայկական ռադիոժամի հարցազրոյցը «Արաքս» ամսագրի գլխաւոր խմբագրի հետ», *Արաքս ամսագիր*, 28(111):2002, էջ 8:

[59] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Մայիս 2006:

Բարեբախտութիւնն այն է, որ գաղթողներից շատերը գնում էին ՀՀ եւ հաստատւում Երեւանում: Այս մէկը դրական ու քաջալերական երեւոյթ է եւ մենք քաջալերած ենք նման քայլեր[60]:

Ինչ վերաբերում է այլ երկրներին, ապա իրանահայերը գաղթում էին ԱՄՆ՝ Աւստրիայի վրայով:

Հարկ է նշել, որ միաժամանակ արտագաղթի ահագնացող սպառնալիքից անհանգստացած Սեպուհ արք. Սարգսեանը մի շարք այցելութիւններ է կատարել Թեհրանի հայոց թեմի տարբեր համայնքներ: 2006 Յուլիսի 21ին Սեպուհ սրբազանը այցելել է Քերմանշահ քաղաք, որի ենթօճախից մնացել էր 6, իսկ Համադանում՝ 4 հայ ընտանիք[61]: Համադանի եկեղեցին գտնուել է տեղի մշակութային ժառանգութեան հիմնարկի խնամքի ներքոյ, իսկ հայ աւետարանական դպրոցի շէնքը վերանորոգուել է նշուած հիմնարկի կողմից: Փաստօրէն, զգալի թուով նուաճումներ են արձանագրուել հայկական ենթօճախներում:

2006 Օգոստոսի 10ին Սեպուհ արք. Սարգսեանն այցելելով Ռաշտի ենթօճախ, մեծապէս գնահատել է տեղի պատասխանատուներին, որոնք նախանձախնդիր հոգածութեամբ պահում են եկեղեցին եւ ազգապատկան կալուածները: Նշելով, որ ենթօճախի արժէքը ոչ թէ իր թուի, այլ իր որակի, կատարած նուաճումների մէջ է: Անզալիում էլ տեղի հայոց եկեղեցադպրոցական հոգաբարձութեան նախաձեռնութեամբ յաջորդ օրը տեղի է ունեցել հայոց գրերի գիւտի 1600ամեակին նուիրուած յուշակոթողի բացումը[62]: Իրապէս, ինչպէս ժամանակի մամուլի հրապարակումներից ու լուսանկարներից է պարզ դառնում, այս երկու ենթօճախները չնայած թուային համեստ տուեալներին ապրում էին ազգային աշխուժ կեանքով: Այդուհանդերձ, կարծում ենք, որ նօսրացած ու ցրուած ենթօճախներն ըստ էութեան դարձել էին «համայնքի պատասխանատուներից» կազմուած փոքրաթիւ ու խորհրդանշական հանրոյթ:

Հայ մշակութային «Սիփան» միութեան վարչութեան անդամ Ժոզէֆ Մեհրաբեանի խօսքով՝

Արդէն հերթական գաղթը իր 2րդ տարին է ուզում բոլորել: Նոր Ջուղայի թեմը միայն այս վերջերս անդրադարձաւ գաղթին. երկարաշունչ, բայց տեղին: Ճիշտ այդ կոչի աջում՝ «Դիտանկիւն» սիւնակում առաջարկուեց, որ միւս թեմերը եւս հանդէս գան նման կոչով, սակայն մինչ օրս՝ ոչ մի կոչ: ... Գաղթի հիմնական պատճառներից մէկը տնտեսական գործօնն է, սակայն չենք խուսափել մեր գաղութի կեանքի բոլոր սակագները մկրտութիւնից մինչեւ մահ թանկացնել[63]:

---

[60] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 09 Յուլիս 2006:
[61] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 31 Յուլիս 2006:
[62] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 21 Օգոստոս 2006:
[63] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 01 Յուլիս 2007:

2020 Փետրուարից ԻԻՀ խորհրդարանի 11րդ գումարման պատգամաւոր, առեւտրի վարչագիտութեան մասնագէտ Արա Շահվերդեանը կարծում է, որ արտագաղթողների շուրջ 80%ը ծննդավայրից հեռանում է այն պատճառաբանութեամբ, որ իր հարազատներն այստեղ չեն.

Երբ խօսում ենք արտագաղթողների հետ, ասում են, թէ հիմնական պատճառներից է տնտեսական վիճակը, սակայն եթէ տոկոսային առումով հարցը քննարկելու լինենք, կը տեսնենք, թէ արտագաղթողների խոշոր մասը այստեղ ապահովուած է բնակարանով եւ սեփական գործով կամ ունի լաւ աշխատավարձ եւ ընտանիքը գոնէ նիւթական դժուարութիւն չունի: Ես հակառակը կ'ասէի՝ մնում են նրանք, ովքեր տնտեսապէս շատ էլ բարուօք վիճակում չեն[64]:

Միւս կողմից նշելի է, որ արտագաղթողները փաստօրէն անուղղակիօրէն պատճառ են դառնում, որ նուազի հայօճախի իրաւունքների պաշտպանութեան հարցը եւ հայօճախը կանգնում է դժուարութիւնների դիմաց:

Ըստ ԹՀԹ ազգային առաջնորդարանի քարտուղարութեան գրասենեակի պաշտօնեայ Ժասիկ Խեչոյեանի, արտագաղթի պատճառներն են.-

1. Նիւթական, տնտեսական, բնակարանի խնդիրը եւ անապահով վիճակը,
2. Հարազատներից հեռու լինելը եւ իրենց միայնակ զգալը,
3. Կայ նաեւ մի խաւ, որ իրապէս աննպատակ է եւ մէկը միւսին հետեւելով դիմում է արտագաղթի[65]:

Նրա մէկ այլ խօսքով՝ արտագաղթողները խոշոր գումարներ են ծախսում տարբեր բնագաւառներում, մինչդեռ երբ հերթը հասնում է ազգային կառոյցներին, խնայում են: Ստացւում է, որ յաճախ բողոքում են նրանք, ովքեր երբեւէ նախկինում չեն աջակցել ազգային կառոյցներին: Փաստացի արտագաղթողները նեղ դրութեան մէջ են դնում մնացողներին, որոնք լինելով կշիռ չունեցող համայնք՝ դժուարութեամբ են լուծում այն հարցերը, որոնք պահանջում են վարչական պաշտօնեաների միջամտութիւն, քանի որ վերջիններս այլեւս հայօճախի խնդիրները լուծելու կամ ընդառաջելու համար կարծում են, որ դրանց շահառուները խիստ փոքրաթիւ որեւէ ընկերային խումբ են եւ ոչ թէ նախկինի նման աւելի քան 100.000 հայօճախ:

ԹՀԹ ազգային առաջնորդարանի դիւանապետ Սերոժ Օհանեանի համոզիչ վերլուծութեամբ՝ արտագաղթը ունի տարբեր պատճառներ, որոնք կարելի է այսպէս բնութագրել.- տնտեսական, հասարակական դժուարութիւններ եւ ապագայի նկատմամբ լաւ հեռանկարներ չունենալը, ինչպէս նաեւ արտագաղթի համար հեշտ հնարաւորութիւնները, որոշ ընտանիքների՝ միմեանց հետեւելը: Միւս կողմից, որ առաւել զգայուն հասարակական հարցերն են, ինչպէս, օրինակ՝ եթէ մի հայ ուսանողի ինչ-որ

---

[64] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 04 Յուլիս 2007:
[65] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 11 Յուլիս 2007:

համալսարանում ուսումնասիրութեան թեմա են ներկայացնում, ասենք՝ քրիստոնէութիւնը, առաջին հայեացքով դա լաւ է հնչում, բայց դասախօսութիւնը ներկայացուելուց յետոյ դասախօսը ինչ-որ հակասական եւ վիրաւորական արտայայտութիւններ է թոյլ տալիս քրիստոնէութեան հասցէին, որը վիրաւորում է ուսանողին, դա փոխանցւում է ընտանիքին եւ հարցեր ստեղծում: Մէկ այլ հանրային խնդրի օրինակ, ըստ գործչի, կարող է լինել այն, որ յաճախ հայ երիտասարդները, որոնք ցանկանում են միմեանց հետ նոյնիսկ ինքնաշարժով դուրս գնալ, ինչ-որ դժուարութիւնների են հանդիպում, որը նեղացնում է նրանց, իսկ որոշ պատասխանատու անձինք անյարիր արտայայտութիւններով վիրաւորում են հայկական ազգային եւ կրօնական ինքնասիրութիւնը:

> Իմ կարծիքով արտագաղթին նպաստող կառոյցը հրէական ու թուրքական ինչ-որ առեւտուր է եւ մեր դրամով, որը 2500 դոլար է մեզ տանում են դէպի անորոշութիւն: Ոմանք ազգային իշխանութիւններից պահանջում են բնակարաններ կառուցել եւ տրամադրել երիտասարդ զոյգերին. համաձայն եմ, որ անենք այդ գործը, բայց պիտի իրատեսօրէն նայենք խնդրին. տարեկան ունենում ենք 300-350 զոյգ ամուսնացողներ, ազգային իշխանութիւնը, եթէ շատ հնարաւորութիւն ունենայ կարող է երկու տարուայ ընթացքում ինչ-որ 20 յարկաբաժիններ դասաւորել, մնացեալ զոյգերին ի՞նչ կարելի է անել: Բայց տեսնում ենք, որ Նոր Ջուղայի հայոց թեմում տարիներ է, ինչ կատարւում է բնակարանաշինութիւն եւ դրանք յանձնւում են երիտասարդ զոյգերին, բայց զոյգերը վաճառելով բնակարանները՝ հեռանում են[66]:

Փաստօրէն, արտագաղթի տարիներին առկայ են եղել ընկերահոգեբանական լուրջ խնդիրներ եւս:

Յաջորդ խնդիրն, ըստ Օհանեանի, այն էր, որ դժգոհութիւններ կային եկեղեցում ամուսնութեան սակագների շատ բարձր լինելու վերաբերեալ: Մինչդեռ նրա խօսքով՝

> Խնդիր չէ. եթէ իրապէս մէկի համար դժուար է, կարելի է նոյնիսկ գումար չգաձել, բայց յաճախ զոյգերը միլիոններ են ծախսում հարսանեաց սրահների, երգիչների եւ այլ ծախսերի գծով, բայց երբ հերթը հասնում է ամուսնական եկեղեցական ծախսերին, բողոքներ են ծաւալւում:

Փաստօրէն, այս դէպքում էլ հարցն ունեցել է թէական բնոյթ կամ լուծման անհատական հնարաւորութիւն: Ընդ որում, 2004-7ի ընթացքում մօտ 5500 քրիստոնէութեան վկայագիր է տրուել, որոնցից ոչ-բոլորն են արտագաղթել: Հարկ է նշել, որ 2006ին Իրանի տուեալների կենտրոնի համաձայն՝ Իրանում ապրել է 100.000 հայ[67]:

Հետաքրքրական է, որ վերոնշեալ հարցազրոյցում առաջնորդարանի դիւանապետը անդրադառնում է յարակից ոչ-պակաս կարեւոր նշանակութեամբ հարցերի, ինչպիսին՝ սպորտն է: Նրա խօսքով՝

---

[66] «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Յուլիս 2007:

[67] Նոյն:

Պիտի դիւրութիւններ ստեղծենք մեր մարզիկների համար՝ մասնակցելու համահայկական խաղերին: ԹՀԹ խորհրդի կողմից գնահատուել են այն մարզիկները, որոնք տարբեր մարզաձեւերում ներգրաւուել են Իրանի ազգային հաւաքականներում: Նախաձեռնել տարբեր ուխտագնացութիւնների համար դիւրացումներ, որպէսզի մեր համայնքից աւելի շատ հայրենակիցներ մասնակից լինեն նման ուխտագնացութիւնների:

Փաստօրէն, արտագաղթի խնդիրը կարելի է ըստ ոլորտների լուծել, եթէ աշխատանքային բարուօք պայմաններ ստեղծուէին:

Չնայած Իրանի հայօճախին պատուհասած տեղաշարժերին, այդուհանդերձ, հարկ է նշել, որ համայնքային գործիչների հաւաստմամբ՝ չկայ մի դէպք, որ մի աշակերտ հայոց դպրոցից զրկուած լինի գանձումների պատճառով: Իսկ դպրոցների բարձր թոշակների վերաբերեալ պէտք է նշել, որ դպրոցներն ունեն իրենց ծախսերը, քանի որ լաւորակ ուսում ապահովելու համար անհրաժեշտ են ծախսեր: Ազգային իշխանութիւնը եւս տարեկան բարձր կրթանպաստ է տալիս դպրոցներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, իրանահայութիւնը մուտք է գործել 21րդ դար՝ խոշոր տեղաշարժերով: Այդ տեղաշարժերի սլաքները տանում են արեւմտեան ուղղութեամբ՝ ԱՄՆ եւ ԵՄ, ինչպէս նաեւ Ծոցի արաբական զարգացած երկրներ ու Աւստրալիա:

Տեղաշարժերի գլխաւոր առանձնայատկութիւններից է, որ իրանահայերը փնտռում են աւելի լաւ ընկերային կայուն պայմաններով միջավայր: Դրա հետեւանքով զգալիօրէն փոփոխուել է հայօճախի ընկերային կառուցուածքը, նուազել են բարձրորակ մասնագէտներն ու յատկապէս երիտասարդութիւնը: Նոր պայմաններում խնդրայարոյց են դարձել համայնքային նշանակութեան կառոյցների, առաջնահերթ դպրոցների, պահպանումը, որը պահանջում է ֆինանսական մեծ միջոցներ: Նոյնը վերաբերում է այլ կառոյցներին, որոնք ժամանակի ընթացքում դարձել են սակաւաթիւ, իսկ համայնքային կալուածքների պահպանումն այդ պայմաններում դարձել է դժուարին խնդիր: Այդուհանդերձ, հայօճախի կառոյցները աւանդոյթի ուժով շարունակում են գոյատեւել, իսկ մշակութային միութիւնները շարունակում են հանդէս գալ տարբեր նախաձեռնութիւններով: Թեմական կառոյցների ու խորհրդարանում երկու հայ պատգամաւորների վերահսկողութեան ներքոյ իրականացւում են ընկերային տարբեր ծրագրեր, որոնք ունեն հայապահպան նշանակութիւն:

THE MOVEMENTS OF IRANIAN ARMENIANS AND THEIR CHARACTERISTICS AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY
(SUMMARY)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

tThe demographic problem caused by displacements has become a serious challenge for the Armenian community of Iran. For this reason, the community has decreased not only according to numerical indicators, but also in terms of various specialists. In addition, maintaining many other community structures, priority being given to educational centers and unions, has become an additional financial burden.

Thus, Iranian Armenians entered the 21st century with major changes. The arrows of these shifts point westward to the US and the EU, as well as the developed Arab countries of the Gulf and Australia.

One of the main features of the movements is that Iranian-Armenians are looking for an environment with better social and stable conditions. As a result, the social structure of the community has changed significantly; high-quality specialists and, especially, the number of young people have decreased. Under the new conditions, the maintenance of community structures, the priority being schools, which require large financial resources, has become problematic. The same applies to other structures, which have become few in number over time, and maintaining community institutions under these conditions has become a difficult task. Nevertheless, community structures continue to survive with the strength of tradition, and cultural associations continue to come up with various initiatives. Under the supervision of diocesan structures and two Armenian Members of Parliament in the Islamic Parliament, various social programs which have an Armenian-protecting significance are implemented.